ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 19-20-1

ՀՖՖ

ԿԱՆԱՆՑ ՖՈՒՏԲՈԼԻ ԵՎ ՖՈՒՏԶԱԼԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ

06.05.2020թ. ք. Երևան

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ՝ Ա. Թադևոսյանի

Կոմիտեի Նախագահ	Ա. Թադևոսյան
Փոխնախագահ	Ռ. Նազարեթյան
Անդամներ՝	Գ. Վարդանյան
	Գ. Ստեփանյան
Քարտուղար՝	Խ. Զարգարյան

ՕՐԱԿԱՐԳ

1. 2019-2020 Մրցաշրջանի Սուպերլիգայի վերսկսման մասին: /Զեկուցող Խ. Զարգարյան/
2. 2019-2020 Ֆուտզալ լիգայի կողմից անցկացվող Գավաթի խաղարկության մասին: /Զեկուցող Ռ. Նազարեթյան/
3. 2019-2020 Կանանց ֆուտբոլի առաջնությունների և Գավաթի խաղարկության վերսկսման մասին:
/Զեկուցող Խ. Զարգարյան/

Որոշումներ՝

1. Ներկայացվեց 2019-2020 Մրցաշրջանի Սուպերլիգայի վերսկսման ժամկետները և խաղացանկի նախագիծ:

   Որոշվեց՝ դիմել ՀՖՖ Գործադիր կոմիտեին 201-2020 մրցաշրջանի ֆուտզալի Սուպերլիգայի առաջնությունը գործող ձևաչափով ավարտին հասցնելու նպատակով:

   Կից ներկայացնում ենք խաղացանկը:

2. Ռ. Նազարեթյանը առաջարկեց Սուպերլիգայի առաջնության համընթաց կազմակերպել և անցկացնել նաև ֆուզալ լիգա Գավաթի խաղարկության մրցաշար, որտեղ հնարավորություն կունենան մասնակցելու 11 սիրողական և 5 պրոֆեսիոնալ Սուպերլիգայի մասնակից թիմեր: Տվյալ մրցաշարը հնարավորություն կընձեռի առաջիկայում ստեղծել ֆուզալի նոր ակումբներ՝ 2020-2021 մրցաշրջանում մասնակցելու նպակով:

Առաջարկը ընդունվեց միաձայն և որոշվեց դիմել ՀՖՖ Գործադիր կոմիտեին, որպեսզի Ֆուտզալ Լիգա ՀԿ-ն, որպես ՀՖՖ-ի հետ համագործակցող կազմակերպություն կազմակերպի և անցկացնի Գավաթի խաղարկությունը։

Կից ներկայացնում ենք խաղացանկը։

3. Որոշվեց՝ առաջարկել ՀՖՖ Գործադիր կոմիտեին 2019/20թթ. մրցաշրջանի կանանց ֆուտբոլի Բ խմբի առաջնությունը չվերսկսել և առաջնության չեմպիոն ճանաչել <<Ուրարտու-աղջիկներ>> թիմին՝ ըստ տվյալ խաղաշրջանի վաստակած միավորների։
4. Որոշվեց՝ առաջարկել ՀՖՖ Գործադիր կոմիտեին չեղարկել 2019/20թթ. մրցաշրջանի կանանց ֆուտբոլի գավաթի խաղարկությունը։
5. Որոշվեվ՝ առաջարկել ՀՖՖ Գործադիր կոմիտեին քննարկել Կանանց 2019/20 մրցաշրջանի Ա խմբի առաջնությունը չվերսկսելու հարցը և փոխարենը անցկացնել առաջին և երկրորդ հորիզոնականներում ընթացող Ալաշկերտ-աղջիկներ և Շիրջակ Հոմենմեն թիմերի միջև ՀՖՖ տեխնիկական կենտոն ակադեմիայում հունիսի 14-ին անցկացնել հանդիպում առաջնության հաղթողին որոշելու նպատակով։ Առաջին խաղում Շիրակ Հոմենմեն թիմի հաղթանակի դեպքում անցկացնել նաև երկրորդ հանդիպում։ Շիրակ Հոմենմեն թիմի երկրորդ հանդիպման հաղթանակի դեպքում անցկացնել նաև ոսկե խաղ։
Շիրակ Հոմենմեն թիմի, որևէ խաղի պարտության կամ ոչ ոքի խաղն ավարդելու դեպքում առաջնության չեմպիոն հռչակել Ալաշկերտ-աղջիկներ թիմին։
Չեմպիոնը իրավունք կստանա մասնակցել ՈՒԵՖԱ-ի Չեմպիոնների լիգայի խաղարկությունը։

Նախագահ՝ Ա. Թադևոսյան

Քարտուղար՝ Խ. Զարգարյան